

## ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

### ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԱՌԱՋ Է ԱՆՅԵԼ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ 14 ԵՎ ՆԱՏՕ-Ի 10 ԵՐԿՐՆԵՐԻՉ»

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին լրագրողների հետ զրույցին, անդրադառնալով Եվրամիության թեկնածուի կարգավիճակի շնորհան հարցին, հայտարարեց, որ Ուկրաինային և Մոլդովային թեկնածուի կարգավիճակի տրամադրումը քաղաքական որոշում էր, չնայած Վրաստանն առաջ է անցել ոչ միայն Ուկրաինայից ու Մոլդովայից, այլև ԵՄ 14 և ՆԱՏՕ-ի անդամ 10-ից ավելի երկրներից:

- Բոլոր գնահատականներով, այդ թվում՝ մի քանի ամիս առաջ Եվրահամաժողովի հրապարակած եզրակացությամբ, սեւոլ սպիտակի վրա գրված է, որ Վրաստանն առաջ է Մոլդովայից և Ուկրաինայից:

Ընդհանրապես, մի շարք միջազգային վարկանիշային աղյուսակներում մենք իրականացրած բարեփոխումներով առաջ ենք ոչ միայն Ուկրաինայից ու Մոլդովայից, այլև ԵՄ 14, ՆԱՏՕ-ի 10-ից ավելի երկրներից,- ասաց վարչապետը և հավելեց, որ հունիսի 23-ին Բրյուսելում կայացած Եվրամիության առաջնորդների զագաթաժողովում Եվրախորհրդի ընդունած որոշումը պայմանավորված էր նրանով, որ Ուկրաինան պատե-



րագմի մեջ է, իսկ Մոլդովան՝ պատերազմին հավասար իրավիճակում:

Գիշեցնենք, որ վերոնշյալ որոշմամբ, Ուկրաինային և Մոլդովային տրվեց թեկնածու երկրի կարգավիճակ, իսկ Վրաստանին Եվրոպական հեռանկար և պայմաններ թեկնածուի կարգավիճակ ստանալու համար:

## ԲՐՅՈՒՄԵԼ ԿԱՅԱՆԱՎ ՓԱՇՏՈՒՄԱՆ ԱՄԵՎ-ՄԻՇԵԼ ԵՌԱԿՈՐՄ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հունիսի 15-ին Բրյուսելում Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի մասնակցությամբ անցկացվեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հանդիպումը:

Շուրջ 2,5 ժամ տեւողությամբ եռակողմ հանդիպմանը քննարկվել է նախորդ բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքը:

Եռակողմ հանդիպումից առաջ հանդիպել էին Նիկոլ Փաշինյանն ու Շառլ Միշելը: Հայաստանի վարչապետը Լեռնային Ղարաբաղի նախագահի խնդրանքով ԵՄ խորհրդի նախագահ Շառլ Միշելին էր փոխանցել ԼՂ նախագահի նամակը:



Հանդիպմանը Նիկոլ Փաշինյանն ու Շառլ Միշելը քննարկել էին նաև նախորդ հանդիպումներում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարմանը վերաբերող հարցեր:

## ՀՈՒՆԻՍԻ 15-Ը՝ «ԼԵՌԱՆ ՕՐ»

### «ԼԵՌԱՆ ՕՐԸ» ԿԿԱՐՁՆԵՆՔ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԿՆՇԵՆՔ ԱՄԵՆՈՒՐ»



Արդեն երկրորդ տարին է, ինչ Վրաստանում երկրի կառավարության և անմիջականորեն վարչապետի նախաձեռնությամբ նշվում է «Լեռան օրը»:

Վրաստանի վարչապետի խոսքով, անցյալ տարի մեկնարկած «Լեռան օրվա» տոնակատարությունը նշանակալից է, և այն պետք է դառնա ավանդական:

- Այդ ավանդույթը գլխավորապես ծառայելու է Լեռան գնահատմանը, լեռներում ապրող մարդկանց գնահատմանը,- հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին, ով թուշեթիի և Իմերեթիի, Ղազբեգիի, Գուրիայի և Սվանեթիի բարձրալեռ բնակավայրերում մասնակցեց տոնական միջոցառումներին:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԵԿՈՆՈՄԻԿԱ

### ԿԱՆԽԱԳԾՎԵՑԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԽՈՇՈՐ ԾՐԱԳՐԵՐ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու գլխավորությամբ կառավարության վարչակազմում տեղի է ունեցել Ներդրողների խորհրդի նիստ:

Նիստի աշխատանքին մասնակցեցին և ելույթ ունեցան Վրաստանում Միացյալ Թագավորության դեսպան Մարկ Քլեյթոնը և Վերակառուցման և Կովկասում զարգացման Եվրոպական բանկի տարածաշրջանային տնօրեն (EBRD) Կատարինա Բյորլին Հանսենը:

Ներդրողների խորհրդի քարտուղար Գիորգի Չերքեզիշվի-

լին նիստի մասնակիցներին տեղեկացրել է խորհրդի գործունեության և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման մասին:

Ձրույցն անդրադարձել է ընթացիկ և նախատեսվող տնտեսական խոշոր ծրագրերին, որոնց վրա վարչապետի համաձայնությանն անհրաժեշտ է կառավարության տնտեսական քննարկումը:

## ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

### ՎՐԱՍՏԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 17-18-ը աշխատանքային այցով Հայաստանում էր գտնվում Վրաստանի կրոնական հարցերով գործակալություն պատվիրակությունը՝ կրոնական հարցերի պետական գործակալության նախագահ Ջազա Վաշադմաձեի գլխավորությամբ: Այցի շրջանակներում, պատվիրակությունը հանդիպումներ ունեցան Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի և Հայաստանի վարչապետի խորհրդական Արտաշես Թումանյանի հետ:



Հունիսի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կայացավ աշխատանքային այցով Հայաստանում գտնվող Վրաստանի կրոնական հարցերով պետական գործակալության նախագահ Ջազա Վաշադ-

մաձեին, նրա գլխավորած պատվիրակության անդամների հանդիպումը (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆ - ՈՒԶԲԵԿՍՏԱՆ

### ԿԱՆԽԱԳԾՎԵՑԻՆ ԵՐԿԿՈՐՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հունիսի 17-18-ը պաշտոնական այցով Վրաստանում էր գտնվում Ուզբեկստանի վարչապետ Աբդուլա Արիպովը:

Այցի շրջանակներում, կայացավ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու և Աբդուլա Արիպովի առանձնազրույցը, որին հաջորդեցին ընդլայնված կազմով պատվիրակությունների բանակցությունները:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի և Ուզբեկստանի երկկողմ համագործակցության հիմնական ուղղությունները: Ընդգծվեց երկրների միջև սերտ բարեկամական և գործընկերային հարաբերություն-

ների առկայությունը:

Հանդիպմանը քննարկվեցին երկրների միջև տնտեսական համագործակցության հարցեր: Նշեց, որ Վրաստանն ու Ուզբեկստանը կայուն առևտրային գործընկերներ են, և այդ ուղղությամբ երկրների միջև է՛լ ավելի մեծ ներուժ կա:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

## ԱԼՅԱՆ



### ՆԱՏՕ-Ի ՎԵՋԱԺՈՂՈՎՆ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հունիսի 11-12-ը Լիսվայի մայրաքաղաք Վիլնյուսում անցկացվեց Հյուսիսատլանտյան դաշինքի՝ ՆԱՏՕ-ի անդամ երկրների ղեկավարների Վեհաժողովը:

Վեհաժողովի օրակարգում համաշխարհային գլոբալ իրավիճակի ռուս-ուկրաինական պատերազմի ալյանսի ընդլայնման և այլ հարցերի թվում քննարկվեց ՆԱՏՕ-Վրաստան թեման: Վեհաժողովի վերջնական բանաձեւում Վրաստանի հարցով ընդունված որոշումը նոր ոչինչ չէր պարունա-

կում: Դրանով մեկ անգամ ևս ընդգծվեց, որ Վրաստանը ՆԱՏՕ-ին կարող է անդամակցել ՄԱԴ-ի միջոցով, իսկ ինչ վերաբերում է Ուկրաինային, ապա նա կանդամակցվի առանց ՄԱԴ-ի, թեև կոնկրետ ժամկետների մասին խոսք չի եղել:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



ՀՈՒՆԻՍԻ 15-Ը «ԼԵՈՒՆ ՕՐ»

«ԼԵՈՒՆ ՕՐԸ» ԿԳԱՐՉՆԵՆՔ ԱՎԱՆՂԱԿԱՆ ԵՎ ԿՆՇԵՆՔ ԱՄԵՆՈՒՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Իր խոսքում վարչապետն անդրադարձավ երկրի լեռնային գոտու բնակավայրերում իրականացվող երկրակառուցման...

- Համեմատության համար նշենք նաև գործազրկությունը, որը Սասնա ճակատի օրոք կազմում էր ավելի քան 35 տոկոս...

միլիարդ լարի: Եթե ձեզ հետաքրքրում է, թե այսօր որքան են կազմում մեր ժողովրդի ավանդները...

տեսությունը կաճի 30 միլիարդ լարիով: Կարծում եմ սաշատ մեծ առաջընթաց է, այն պետք է պահպանել ու զարգացնել:

ԱԼՅԱՆՍ

ՆԱՏՕ-Ի ՎԵՐԱԺՈՂՈՎՆ ՈՒ ՎՐԱՍԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նր գլխավորում է երկրի արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլին: Վեհաժողովի ընդունած բանաձեռում կրկին անգամ վավերացվել է ալյանսի անխախտ աջակցությունը...

րածքային ամբողջականությանը: Դրանում կրկին անգամ Ռուսաստանին կոչ է արվում Վրաստանի տարածքից դուրս բերել իր զորամիավորումները...

դարանի պատգամավորները որոշակի հիասթափություն հայտնեցին ՆԱՏՕ-ի Վեհաժողովի ընդունած որոշման կապակցությամբ...

...ԵԹԵ ՌԻԿՐԱԻՆԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՀԱՂԹԵՑ, ԷԼ ԻՆՉԻՆ Է ՊԵՏՔ ՆԱՏՕ-Ի ԱՆՂԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, մեկնաբանելով ՆԱՏՕ-ի Վեհաժողովի ընդունած որոշումը, ըստ որի, Ուկրաինան չի կարող անդամակցել ՆԱՏՕ-ին...

Վարչապետի խոսքով, ՆԱՏՕ-ն Վրաստանից տասնապատիկ մեծ երկրի անդամակցության հարցում անգամ գործուն քայլեր չի կատարում...

նր բեռնի մեր ներքին քաղաքականության որոշ հարցերի վրա: Ավելի լավ կլիներ, եթե ուշադրությունը կենտրոնացնեն իրենց երկրի առջև ծառայած մարտահրավերների կարգավորման վրա...

ՀՐԲԵԼՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐ 100-ԱՄՅԱԿԴ, «ԳՅՈՒՐՋԻՍՏԱՆ»

Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի աշխատակազմի կազմակերպմամբ և Վրաստանի կառավարության աջակցությամբ, անցկացվեց համրապետական «Գյուրջիստան» թերթի 100-ամյա հորելյանին նվիրված միջոցառում:



Միջոցառման շրջանակներում, անցկացվեց պարզեւատրման արարողություն: Պետնախարար Թեա Ախվեղիանին խմբագրության աշխատակիցներին քաղաքացիական ինտեգրման գործընթացում և «Գյուրջիստան» թերթի գործունեությունում ներդրած ավանդի համար հանձնեց պատվոգրեր, հորելյանական հուշանվերներ:

Միջոցառումը բացեց հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվեղիանին: Պետնախարարը խոսեց «Գյուրջիստանի» մեկնարկային պատմության և այն նշանակալից առաքելության մասին...

ժողականության և փոխադարձ հարգանքի վրա հիմնված արժեքների վրա: Միջոցառմանը խոսքով ելույթ ունեցան նաև «Գյուրջիստան» թերթի գլխավոր խմբագիր Խալաղիա Էլչուևը, Վրաստանի խորհրդարանի մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման կոմիտեի նախագահ Միխեիլ Սարջվելաձեն, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրայանը և «Վրաստանի արդեթեանցիների կոմիտե» ոչ կառավարական կազմակերպության նախագահ Յուսեյն Յուսուբովը:

ՄԻՋԱԳԵՊ

ՌՍԻ ԲՐԵՊԱՅԵ. «ՏԵՂԻ ՌԻՆԵՑԱԾԸ ԷԹԻՎԱՅԻ ԵՎ ԲԺՇԿԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԿՈՊԻՏ ԽԱԽՏՈՒՄ Է»


ՄԵՂԱԳՐՅԱԼ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՊԱՆԸ, ԼԵՉ ԲԺԵԿԿԵՐՆ ՌԻ ԳՈՒՂԱՆԵՐԸ...

Անցյալ շաբաթ «Վիվա մեդի» կլինիկայում Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սասնաճակաշվիլուն այցելեցին լեի բժիշկները: Այդ այցելությունը հանգեցրեց նոր սկանդալի, որը ծագեց այցելուներից մեկի գործունեության արդյունքում:

Կլինիկայի տնօրեն Ջուրաբ Չխաիձեի խոսքով, լեի բժիշկները համաձայնվեցին «Վիվա մեդի» բժիշկների՝ Սասնաճակաշվիլու բուժման տակտիկայի ու անցկացված հետազոտությունների հետ: Լեիները նշեցին նաև, որ նախկին նախագահին տրվող սնունդը, որը հիմնականում բերում են տանից, պակաս կալորիական է, և կալորիաների ավելացման դեպքում, նրա իրավիճակը կբարելավվի:

մաձայն, լեի բժիշկներից մեկը տեղում վերցրած մնուշը փաթեթեց թղթի մեջ, թաքցրեց գուլպայի մեջ և այդ ձևով փորձեց այն դուրս բերել կլինիկայից: Բացահայտումից հետո, բժիշկը հայտարարեց, որ գրպաններից օգտվել չի սիրում և ամեն ինչ թաքցնում է գուլպաների մեջ: - Դա էթիկայի և բժշկական-իրավական նորմերի կոպիտ խախտում է,- այսպես մեկնաբանեց վերոնշյալը Վրաստանի արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեն: Դեպքի առթիվ Վրաստանում Լեհաստանի դեսպանի պաշտոնակատար Մարիուշ Պիետր ժակը հրավիրվել է արտաքին գործերի նախարարություն (ԱԳՆ) «Վիվամեդ» կլինիկայում տեղի ունեցած միջադեպի առնչությամբ պաշտոնական պարզաբանումներ տալու նպատակով:

Լեհաստանի արտաքին գործերի նախարարությունը արձագանքել է Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սասնաճակաշվիլուն հիվանդանոցում այցելած լեի բժիշկների հետ կապված միջադեպին: Լեհական կողմն ասում է, որ Վրաստանի կառավարության ներկայացուցիչների «հուզական հայտարարությունները» հակասում են դրական համագործակցության սկզբունքներին:



BRICS» ՎԱԿԱԹԱԺՈՂՈՎԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԱՌԱՆՑ ՊՈՒՏԻՆԻ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը չի մասնակցի օգոստոսին Յոհաննեսբուրգում կայանալիք «BRICS» գագաթաժողովին: Նրա փոխարեն, ռուսական պատվիրակությունը կգլխավորի Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը: Նշվում է, որ Պուտինը գագաթաժողովին չի մասնակցի ընդհանուր ու համաձայնեցված որոշմամբ:

Մինչ այդ, միջազգային մամուլում տեղեկություն էր տարածվել, որ Հարավաֆրիկյան Հանրապետության նախագահը դիմել է Միջազգային քրեական դատարանին, որպեսզի երկիրը թույլ տա Պուտինին չկալանավորել Յոհաննեսբուրգ ժամանելու դեպքում, քանի որ դա հավասարազոր է պատերազմ հայտարարելուն:

Ինչպես հայտնի է, Հասագայի դատարանը Ռուսաստանի նախագահին կալանավորելու օրդեր է տվել, ուստի Պուտինի Հարավային Աֆրիկա ժամանելու դեպքում, հարավաֆրիկյան իշխանությունները ստիպված կլինեն նրան ձերբակալել:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

«ՍԵՎԾՈՎՅԱՆ ՀԱՅԱՐԱՏԻԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ» ԿԱՍԵՑՎԵԼ Է

Սոսկվան հրաժարվել է երկարածազել «հացահատիկի գործարքը», որի գործողության ժամկետը լրացավ հուլիսի 17-ին: Կրեմլում դա պատճառաբանում են նրանով, որ Սեւծովյան համաձայնագրերի՝ Ռուսաստանին վերաբերող մասը չի կատարվել:

Յիշեցնենք, որ ՄԱԿ-ի միջնորդությամբ Թուրքիայում կնքված վերոնշյալ համաձայնագրով Ուկրաինան հնարավորություն ուներ ծովային ուղիով դուրս բերել իր գյուղատնտեսական արտադրանքը, մասնավորապես, հացահատիկը:

ԻՐԱԲ

ՎՏԱՐՎԵՑ ԵՎԵՂԻԱՅԻ ԴԵՄՊԱՆԸ

Իրաքը երկրից վտարեց Եվեղիայի դեսպանին և Ստոկհոլմից իր ներկայացուցչին ետ կանչեց: Պատճառը Եվեղիայում բնակվող իրաքցի Սալվան Մոմիկայի կողմից Ղուրանը այրելու մասին հայտարարությունն էր, ինչի թույլտվության համար նշված անձը դիմել է շվեդական ոստիկանություն և համաձայնություն ստացել խոսքի ազատության հիմքով: Այս փաստից կատարած շիաների կրոնական առաջնորդ Մուկթաթա ա-Սադրի կողմնակիցները գիշերը ներխուժել են Բաղդադում Եվեղիայի դեսպանատուն և իրկիզել տարածքը:

Իրաքի կառավարությունը Եվեղիայի կառավարությանը տեղեկացրել է, որ հունիսի 28-ին Եվեղիայի տարածքում Ղուրանի այրման միջադեպի կրկնվելու դեպքում, ինչպես դա եղել է նախկինում, երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները կկասեցվեն:

ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՌԻԿՐԱԻՆԱ

ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐՐ՝ ԴՐԻՄԻ ԿԱՄՐՋԻ ՎՐԱ

Յուլիսի 17-ին, Դրիմի կամրջի վրա տեղի ունեցած արտակարգ պատահարի հետևանքով, մեկ տղամարդ է մեկ կին է գոհվել: Նրանց դուստրը տեղափոխվել է հիվանդանոց: Դրիմի կամրջով երթևեկությունը դադարեցվել է:

Ռուսաստանում քրեական գործ է հարուցվել Դրիմի կամրջի վրա կատարված ահաբեկչության հոդվածով:

Ուկրաինայի ռազմական հետախուզության գլխավոր վարչությունը հրաժարվել է մեկնաբանել Դրիմի կամրջի վրա տեղի ունեցածը:



Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԵՒ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍԱՆ - ՈՒԶԲԵԿԱՍԱՆ

ԿԱՆԽԱԳԾՎԵՑԻՆ ԵՐԿԿՈՂՄ ՉԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԴԱՅՆՄԱՆ ԴԵՄՈՆՍՏՐԱՆԵՐԸ

(Սկզբը՝ 1-ին էջում)

Ընդլայնված հանդիպումից հետո, Վրաստանի եւ Ուզբեկստանի վարչապետերը ստորագրեցին Վրաստանի եւ Ուզբեկստանի միջեւ երկկողմ համագործակցության զարգացման համար համատեղ գործնական միջոցառումների 2023-2024 թվականների գործողությունների ծրագիրը:

Համաձայնագիր ստորագրվեց նաեւ Վրաստանի Առևտրաարդյունաբերական պալատի եւ Ուզբեկստանի Առևտրաարդ-

յունաբերական պալատի միջեւ Վրաստան-Ուզբեկստան գործարար խորհրդի ստեղծման վերաբերյալ:

Պաշտոնական այցի հաջորդ օրը՝ հունիսի 18-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Աջարիայում հյուրընկալել էր Ուզբեկստանի վարչապետ Աբդուլա Արիպովին:

Նույն օրը Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Բաթումի մի-



ջազային օդանավակայանում ճանապարհեց Ուզբեկստանի վարչապետին:



ՀԱՄԱԽԱՈՆ ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔՆ ԱՃԵԼ Է 7,7 ՏՈՒԿՈՍՎ

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալներով, 2023 թվականի առաջին եռամսյակում Վրաստանում համախառն ներքին արտադրանքի ծավալը ընթացիկ գներով կազմել է 16,5 մլրդ լարի եւ, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, իրական համախառն ներքին արտադրանքի աճը կազմել է 7,7 տոկոս: Վիճակագրության համաձայն, 2023 թվականի առաջին եռամսյակում համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) դեֆլյատորի տոկոսային փոփոխությունը որոշվել է 6,8 տոկոսով:

ՅՈՑ ԱՍՏՈՒՄ ՏՐՎԵԼ Է 180 ՀԱԶԱՐ ԿԵՆՍԱԶՎՈՒԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ

Պետական ծառայությունների գործակալության տվյալներով, 2023 թվականի հունվարի 1-ից մինչ օրս Վրաստանում տրվել է 178 556 կենսաչափական անձնագիր: Նշենք, որ Վրաստանի քաղաքացու կենսաչափական անձնագիրը անձը հաստատող փաստաթուղթ է, որի հավաստիությունը ճանաչված է միջազգային մակարդակով: Կենսաչափական անձնագիր տրվում է Վրաստանի ցանկացած տարիքի քաղաքացու:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ (21 ԽՈՒՄԻ)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարարդրամի հետեւյալ կուրսը:

Տարարդրամ	Լարի
1 ԱՆՏ ԴՈՒՆԱՐ	2.5693
1 ԵՎՐՈ	2.8804
100 ՌՈՒԲԼԻ	2.8380
1000 ԴՐԱՄ	6.6540

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆԽՎԵԼ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԳՆԱՅՏԱԳՐՎԱԾ ԱՊՐԱՆՔԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ



«Թբիլիսիի օդանավակայան», «Քուբայիսիի օդանավակայան» անցակետերում եւ «Բաթումիի» ձեւակերպման տնտեսական գոտում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները կանխեցին մեծաքանակ չիստազրված ապրանքի ներկրման փորձը:

Չիստազրված ապրանքի մաքսային ընդհանուր արժեքը կազմում է մոտ 39 339,81 լարի:

Օրինախախտումն թույլ տված Վրաստանի քաղաքացի Ի.Ա.-ի գործի նյութերը հետագա արձագանքման նպատակով փոխանցվել են ֆինանսների նախարարության հետաքն-

նության ծառայությանը: Պակիստանի քաղաքացի Մ.Ա.-ին մաքսային օրենսդրության 186 հոդվածի առաջին մասի համապատասխան, որպես պատժամիջոց՝ սահմանվել է տուգանք՝ 4 751,81 լարիի, իսկ ընկերություններից մեկի համար՝ նույն հոդվածի երկրորդ մասով՝ 10 372 լարիի չափով տուգանք:

ՎԵՑ ԱՍՏՈՒՄ ԲԱՑԱՐԱՅՏՎԵԼ Է ԱՌԱՆՑ ԱԿՑԻԶԻ ԾԽԱԽՈՏԻ ԻՐԱՑՄԱՆ 826 ՓԱՍՏ

Ընթացիկ տարվա հունվար-հունիս ամիսների տվյալներով, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցները, երկրի ողջ տարածքով իրականացրած միջոցառումների արդյունքում, հայտնաբերել են 66 301 տուփ (այդ թվում՝ 715 էլեկտրոնային) ծխախոտ եւ շուրջ 24 կիլոգրամ առանց ակցիզի ծխախոտեղենի պահպանման, իրացման եւ փոխադրման 826 փաստ:

Վրաստանի հարկային օրենսդրության համաձայն, հայտնաբերած առանց ակցիզի ապրանքը բռնագրավվել է: 446 փաստով իրավախախտումն թույլ տրված

անձանց նկատմամբ ձեւակերպվել են վարչական իրավախախտման արձանագրություններ, եւ գործի նյութերը հետաքննության համար փոխանցվել են

դատարանին: 11 փաստով գործի նյութերը հետաքննության համար փոխանցվել են Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը: Մնացած 369 փաստով ձեւակերպվել են առանց ակցիզի ապրանքի բռնագանձման արձանագրություններ:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱՆԵՐԱՆ

ԱՆՍԼՔԱՆՔԻ ԾՐԱԳՐՎԵՅ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲԱՐՔԱՅԻՆԱԿԱՆ ԲՅՈՒՑԵՆ



Հունիսի 15-ին Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետարանի վարչական շենքի բակում անցկացվեց հանդիպում 2024 թվականի 30 000 լարի գումարով նախատեսված քաղաքացիական բյուջեի պլանավորման հարցով: Այդ գումարով կֆինանսավորվեն բնակչության կողմից ներկայացված նախագծերը:

Հանդիպմանը մասնակցեցին Ախալքալաքի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ Սկրտիչ Մղդեսյանը, քաղաքապետարանի եւ սակրեբուլոյի աշխատակիցներն ու հետաքրքրվող անձիք:

Նախագծեր ներկայացնելու հնարավորություն ունեն Վրաստանի այն քաղաքացիները, ովքեր գրանցված են կամ ապրում են Ախալքալաքում:

Նախագծի իրականացումը պետք է լինի Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետարանի իրավասությունների շրջանակներում եւ ծառայի բնակչության բարեկեցությանը, ոչ թե մասնավոր բիզնեսի շահերին:

Ընտրված նախագծերը կֆինանսավորվեն մունիցիպալ բյուջեից, քաղաքացիական բյուջեի ծրագրի շրջանակներում, քաղաքացիների կողմից նախագծի իրականացման համար հատկացված գումարով:

Նախագծերի ընտրության վերջնական որոշումը քաղաքացիները կկայացնեն ընտրության ընթացքում:

ՆԻՆՈՇՄԻՆԳԱՒ. ՔՆՆԱՐԿՎԵՅԻՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԿՈՆԿՐԵՏ ԶԱՐՅԵՐ

Հունիսի 20-ին Նինոծմինդաշի մունիցիպալիտետի քաղաքապետ՝ Անի Մոսոյանը հանդիպեց մունիցի-

պալիտետի Մեծ Խանչալի եւ Կաթնատու գյուղերում ապրող կանանց հետ:

Կաթնատու գյուղում կայացած հանդիպմանը քննարկվեցին այն հարցերը, որոնց լուծումն առաջնային է այդ



գյուղերում ապրող կանանց համար:

Մասնավորապես, քննարկվեցին Կաթնատուի գյուղի մանկապարտեզի ամիրաժեշտության, ինչպես Կաթնատու, այնպես էլ՝ Մեծ Խանչալի գյուղում Մշակույթի տան գործունեության, մանկական խաղահրապարակներում մանկական ատրակցիոնների ավելացման, ինչպես նաեւ մանկական խաղահրապարակների ցանկապատման հարցերը:

Հանդիպմանը մասնակցեցին քաղաքացիական ներգրավման անդամները, Մեծ Խանչալիի վարչական միավորումում քաղաքապետի ներկայացուցիչն ու մասնագետը:

ԱՆՍԼՅԻՆԵ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՎԱՐԺԱՆՔ՝ ԳՅՈՒԱՏՆԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՐՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԶԱՄԱՐ

Սանցիս-Չավախեթի տարածաշրջանի պետական լիազորի աշխատակազմի կազմակերպմամբ, Ախալցխեում անցկացվեց ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տեղական ու միջազգա-

յին գյուղատնտեսների գործնական զարգացման մեթոդի վրա հիմնված (CA) վարժանքը:

Տեղեկատվական հանդիպմանը, որին մասնակցեցին Սանցիս-Չավախեթի տարածաշրջանի պետական լիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանշվիլին, փոխնահանգապետները, տարածաշրջանի բոլոր մունիցիպալիտետներից իրավիրված ֆերմերները, Օրփոլոյի գարու ցանքադաշտերում ծանոթացան հատիկաընդեղենի «գրոյական վերամշակ-



ման» տեխնոլոգիայով աճեցման գերակայություններին, տեղեկացան արդի էկոլոգիական կայուն եւ քիչ ծախսատար գյուղատնտեսական մեթոդներին:

Վարժանքն անցկացրին FAO-ի ներկայացուցիչները: Ուսումնատեղեկատվական հանդիպումն անցկացվեց հարցուպատասխանի աշխատակարգով: Տարածաշրջանի մունիցիպալիտետների գործող ֆերմերները ստացան իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:

Հատկանշական է, որ FAO-ի գրոյական վերամշակման տեխնոլոգիայի ներդրման ծրագիրը Եվրամիության ENPARD ծրագրի շրջանակներում, 2020 թվականին կիրարկվել է Ախալցխեի մունիցիպալիտետում:

Էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ



ՎՐԱՍԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՍԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐՋԵՐՈՎ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պումը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ: Հանդիպմանը Նորին Սրբու-

յաստանի կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի բաժնի պետ Վարդան Ասատրյանը, Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների ու արարողա-



թյունը կարեւորեց երկու երկրների միջեւ նման փոխայցերը, որոնք նպաստում են հայ-վրացական բարեկամական կապերի առավել ամրապնդմանն ու զարգացմանը: Վեհափառ Հայրապետն իր զննահատանքը փոխանցեց վրաց իշխանություններին տիրող դժվարին իրավիճակում Հայաստանին ցուցաբերվող գորակցության, ինչպես նաեւ Աղբյուրում պահվող հայ ռազմագերիների վերադարձման նպատակով միջնորդական ջանքերի համար:

կարգի բաժնի տնօրեն Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը եւ Հայաստանում Վրաստանի արտակարգ ու լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն:

Աշխատանքային այցի շրջանակներում, Վրաստանի կրոնի հարցերով պետական գործակալության ղեկավարը հանդիպում ունեցավ նաեւ Հայաստանի վարչապետի խորհրդակցական, Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի նախագահ Արտաշես Թումանյանի հետ:

Իր հերթին, Վրաստանի կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Ջազա Վաշաղմաձեն Ամենայն Հայոց Հայրապետին մանրամասն տեղեկություններ փոխանցեց երկրում առկա կրոնական խճապատների եւ կրոնական կազմակերպությունների ու ավանդական եկեղեցիների նկատմամբ տարվող պետական քաղաքականության մասին:

Հանդիպմանը ներկայացվեց Վրաստանի պետության կրոնական քաղաքականության հիմնական ուղղություններն ու պետության կողմից կրոնական կազմակերպությունները:

Ջազա Վաշաղմաձեն անդրադարձավ նաեւ կրոնական միավորումների գույքային եւ ֆինանսական համաձայնագրերի գործունեությանը՝ նշելով, որ Վրաստանի ֆինանսավորումը հասցվել է մեկ միլիոն լարիի:

Պայմանավորվածություններ ձեռք բերվեցին նշված ոլորտներում համագործակցության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Հանդիպմանը ներկա էին նաեւ Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն, Վրաստանի դեսպանության առաջին քարտուղար Շավկա Սաբաուրին:

Ջրույցի ընթացքում արծարծվեցին Վրաստանում հոգեւոր ժառանգության պահպանմանը, Հայոց եւ Վրաց եկեղեցիների փոխհարաբերություններին եւ հայ-վրացական կապերի հետագա ամրապնդմանն առնչվող հարցեր: Ամենայն Հայոց կաթողիկոսն իր եղբայրական ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց Համայն Վրաստանի Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին: Հանդիպմանը ներկա էին Հա-

ՆԵՐԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ

«ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱՉԱՆՔԸ» ՔՎԵՍՈՒ ԲԱՐԹԼԻ ԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ ԱՎԱՐՏԵՅ ԿՈՒՄԱԿՅԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԸ

«Վրացական երազանք - ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցությունը, տարածաշրջանային կուսակցական համաժողովների անցկացման շրջանակներում, ավարտեց հավաքները Քվեմո Քարթլիի տարածաշրջանի մունիցիպալիտետներում:

Մասնավորապես, տարածաշրջանի Ռուսթավի, Գարդաբանի, Ծալկայի, Թեթրիժարոյի, Բուլնիսի, Մառնեուլի եւ Դնանիսի համաժողովներում ընտրվել են տեղական կազմակերպությունների նախագահներ եւ բյուրոյի անդամներ:

«Վրացական երազանք»-ի Դնանիսի կազմակերպությունը կզլխավորի Դնանիսի մունիցիպալիտետի քաղաքապետ Կորա Սուրադաշվիլին: Բուլնիսի կազմակերպությունը՝ Բուլնիսի մունիցիպալիտետի քաղաքապետ Դավիթ Շերազադիշվիլին, Մառնեուլի կազմակերպությունը՝ Մառնեուլի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Ամիրան Գիորգաձեն, Ծալկայի կազմակերպությունը՝ Ծալկայի մունիցիպալիտետի քաղաքապետ Իլիա Սաբաձեն, Թեթրիժարոյի կազմակերպությունը՝ Թեթրիժարոյի մունիցիպալիտետի քաղաքապետ Գիորգի Օիկլաուրին, Ռուսթավի կազմակերպությունը՝ Ռուսթավի մունիցիպալիտետի քաղաքապետ Նինո Լաջա-



բիձեն, Գարդաբանի կազմակերպությունը՝ Գարդաբանի մունիցիպալիտետի քաղաքապետ Դավիթ Կարգարեթլին:

Հիշեցնենք, որ «Վրացական երազանքի» կուսակցական համաժողովներն արդեն անցկացվել են Թբիլիսիում, Աջարիայում, Սամցխե-Ջավախքի, Շիդա Քարթլիի, Քվեմո Քարթլիի, Սցխեթա-Մթիանեթի եւ Կախեթի տարածաշրջաններում:

«ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ» ԵՎ «ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՄԱՇԵՆԵԲԵԼԻ»-ԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԵՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՎՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հուլիսի 20-ին Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում կայացած միջոցառմանը «Միացյալ ազգային շարժում» եւ «Ռազմավարությունը Աղմաշենեբելի» ընդդիմադիր կուսակցությունները հայտարարեցին միասնական քաղաքական հարթակ ստեղծելու մասին:



«Ազգային շարժման» կուսակցության նախագահ Լեւան Խաբեիշվիլին ու «Ռազմավարությունը Աղմաշենեբելի» ղեկավար Գիորգի Վաշաձեն հայտարարեցին, որ քաղաքական ուժերը միավորվում են արեւմտամետ հարթակի շուրջ՝ նպատակ ունենալով տա-

պալել իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը: Վրաստանի խորհրդարանի Սարգու իրավունքների պաշտպանության կոմիտեի նախագահ Միխեիլ Սարջվելաձեն, արծագանբելով վերոնշյալին, նշեց, որ նման խուսանավումներով արմատականները ոչնչի չեն հասնի:

դասավորությունը փոխելով բովանդակությունն ու մեղեդին չի փոխվում: Ըստ այդմ, եթե նրանք փոխելու բան ունեն, դա բովանդակությունն է, այլ ոչ թե կարգախոսների թարմացումը, - նշեց Միխեիլ Սարջվելաձեն ու հավելեց, - «Ազգային շարժումը» եւ «Ռազմավարությունը Աղմաշենեբելի»-ին ասում են, որ նոր էներգիա է պետք: Այսինքն, նրանք ընդունում են, որ այն, ինչ մինչ այժմ առաջարկել են հանրությանը, ապարդյուն էր ու ոչ պիտանի, եւ դա եղավ պատճառը, որ իրենց հեղինակությունն անկում ապրեց:

- Նրանք գիտակցում են, որ հանրությանն առաջարկվող իրենց քաղաքականությունը լի էր սխալներով, ուստի պետք է փոխեն այդ պատմությունը: Սակայն հանրությունը գիտակցում է, որ նրանց հայտարարությունների

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍԱՆԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲՆԱԿԻՉԸ՝ ԱՎՏՈՄԵԲԵԱՅԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ներքին գործերի նախարարությունը, 2023 թվականի վեց ամսում մարդատար ավտոմեքենաների թիվը երկրում աճել է 4,4 տոկոսով: Գերատեսչության տվյալներով, 2023 թվականի հունիսի 30-ի դրությամբ Վրաստանում ակտիվ կարգավիճակ ունեցող գրանցված մարդատար ավտոմեքենաների թիվը կազմել է 667 800, մինչդեռ 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Վրաստանում եղել է 639 700 մարդատար ավտոմեքենա:

Եթե հաշվի առնենք, որ Վրաստանի բնակչությունը կազմում է ավելի քան 3,7 միլիոն, Վրաստանի յուրաքանչյուր հինգ բնակչին բաժին է ընկնում մեկ ավտոմեքենա: Ըստ որում, 2023 թվականի առաջին եռամսյակի ցուցանիշների համեմատ, ավտոմոբիլների քանակի աճը երկրորդ եռամսյակում կազմել է 1,5 տոկոս:

Ավտոմոբիլների ընդհանուր թվի մեկ երրորդը գրանցված է Թբիլիսիում: Ըստ որում, 2023 թվականի հունվարի 1-ից մինչեւ մարտի 31-ը մայրաքաղաքում հաշվառված ավտոմեքենաների թիվն աճել է 8 տոկոսով եւ կազմել 198 800:

Վրաստանում երթեւեկող բոլոր մարդատար ավտոմոբիլների 93,6 տոկոսը հաշվառված է ֆիզիկական անձանց անունով: Վրաստանում ընկերություններին է պատկանում սոսկ 41 700 ավտոմեքենա:

ՄԱՐԴԱՏԱՐ ՍԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՏԱԼԻՉԱՏՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՋԱՆՈՒՄՆ ԱՐԳԵԼՎԵՑ

Ինչպես արդեն հաղորդել ենք, համաձայն խորհրդարանի կողմից ընդունված օրենսդրական փոփոխությունների, Վրաստանից կատալիզատորների արտահանումն արգելվում է: Վերոնշյալ օրենսդրական փոփոխությունը կգործի մինչեւ 2026 թվականի մայիսի 1-ը:

Վրաստանի կառավարության կարծիքով, կատալիզատորների արտահանման արգելումը երկրում կնվազեցնի օդի աղտոտվածությունը:

Ավելացնենք, որ վերոնշյալ փոփոխությունը չի տարածվում մինչեւ 2023 թվականի մայիսի 1-ը տրված թույլտվությունների վրա:

Ըստ տարիների, ամենաշատ կատալիզատորները Վրաստանից արտահանվել են 2021 թվականին, որը կազմել է 31 միլիոն դոլար, իսկ երկրորդ տեղում 2020 թվականն է՝ 16,9 միլիոն դոլարի արտահանմամբ:

ՎՐԱՍԱՆԻ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՊԱՐԿՈՒՄ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ ԵՆ «ԾԵՐ» ՍԵՔԵՆԱՆԵՐԸ

Վրաստանում ներդրումային առաջատար բանկի՝ Galt & Taggart-ի փոխանցմամբ, Վրաստանում մարդատար ավտոմեքենաների տարիքը եվրոպական երկրների շարքում ամենաբարձրերից է:

Ըստ Galt & Taggart-ի տվյալների, 2022 թվականի սեպտեմբերին երկրում ավտոմեքենաների մեծ մասն արտադրվել է մինչեւ 2002 թվականը: Ըստ ուսումնասիրության տվյալների, երթեւեկող մեքենաների 53 տոկոսը թողարկվել է ավելի քան 20 տարի առաջ, 30 տոկոսը՝ 11-20, 11 տոկոսը՝ 7-10, 3 տոկոսը՝ 4-6 եւ միայն 3 տոկոսը՝ 0-ից 3 տարի առաջ: Ավելացնենք, որ 2024 թվականի հունվարի 1-ից Վրաստանում կարգելի մինչեւ 2013 թվականն արտադրված թեթեւ մեքենաների ներմուծումը:

ԱՃՈՒՄ Ե ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ՍԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ

Միջազգային էներգետիկայի գործակալության տվյալներով, էլեկտրական շարժիչներով մեքենաների վաճառքն ամբողջ աշխարհում հասել է ռեկորդային առավելագույնի: Այս միտումը նկատելի է նաեւ Վրաստանում: 2023 թվականի չորս ամիսներին Վրաստան է ներմուծվել 15,9 մլն դոլարի 545 միավոր էլեկտրական ամեքենա, ինչը տարվա այս ժամանակահատվածում գրանցված պատմական առավելագույնն է:

Ներմուծման արժեքը 220 տոկոսով բարձր է նախորդ տարվա ցուցանիշից. քանակը նախորդ տարվա 177 միավորից աճել է 208 տոկոսով:

Ի դեպ, տարեկան ցուցանիշները նույնպես ռեկորդային մակարդակի վրա են: 2022 թվականին երկիր է ներմուծվել 31,7 մլն դոլար արժողությամբ 1 280 էլեկտրական մեքենա: